ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Մեղրի քաղաքի մարզադաշտի վերանորոգում» ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը.

2021 թվականին վճարված ռոյալթիներից ազդակիր բնակավայրերին ու ազդակիր բնակավայրեր ներառող համայնքներին համայնքային մասհանումների «Մեղրի քաղաքի մարզադաշտի վերանորոգում» ծախսման ծրագրում առաջնահերթությունը տրվում է մշակութի, սպորտի և երիտասարդության զբաղվածությանը՝ համաձայն ՀՀ կառավարության 01.09.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» թիվ 1370-Ն որոշման 8-րդ կետի՝ մշակութային, սպորտային և երիտասարդական նշանակության ծրագրեր, այդ թվում՝ մշակույթի տան, գրադարանների, թանգարանային շենքերի ու շինությունների, սպորտային նշանակության մարզական և խաղային հրապարակների, խաղադաշտերի կառուցում և վերանորոգում ուղղությունների:

Մեղրի համայնքի Մեղրիի քաղաքային մարզադաշտը և իր հարակից տարածքները, որոնք ծառայել են որպես բասկետբոլի և վոլեյբոլի դաշտեր, իսկ լողավազանները ողջ համայնքի դեռահասների, պատանիների համար Մեղրիի ամառային տապ ամիսների մխիթարանքն ու միակ զբաղմունքի վայրերն են, այսօր գտնվում են անմխիթար վիճակում: Դեռևս 1960-ականների վերջերին սկսած և 1970-ականների սկզբներին կառուցված Մեղրիի քաղաքային մարզադաշտը իր ներուժի միայն 20 %-ով է ծառայում Մեղրի համայնքի բնակչությանը: Այն գտնվում է Մեղրի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցին հարակից տարածքում, որն էլ շատ հարմար է դպրոցական ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների և դասաժամերի անցկացման համար: ԿԳՄՍ Նախարարության կողմից հաստատված հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի նորմատիվների հանձնման, ստուգարքների, սպորտլանդիաների, հետաքրքիր մարզաշարերի անցկացման համար համապատասխան միջավայր ու պայմաններ ստեղծելու փայլուն հնարավորություն է ընձեռում այս մարզադաշտի վերանորոգումը, որն էլ կխթանի երիտասարդների ներգրավածությունը, իսկ մարզիչների՝ շահագրգռվածությունը կառավարության կողմից մշակված բազում մրցաշարերին մասնակցելուն:

Բացի մարզամշակութային կյանքի ակտիվացումից այս ծրագիրը Մեղրին ավելի գրավիչ և տպավորիչ կդարձնի հյուրերի, զբոսաշրջիկների շրջանում:

Նշենք նաև, որ Մեղրին տարբերվում է իր հարուստ կոլորիտով, մշակութային առանձնահատկություններով, տոներով: Դեռևս Սովետական Միության ժամանակներից այդ վայրում ամեն աշուն նշվել է «Կանաչ, կարմիր կիրակի» տոնախմբությունը և այլ փառատոններ, որոնք համախմբել են Մեղրի համայնքի ողջ բնակավայրը, հյուրընկալել մայրաքաղաքից և այլ մարզերից բազմաթիվ հյուրերի, պարային համույթների ու երգի խմբերի:

Ցավոք, այսօր շատ սահմանափակ՝ կարելի է ասել անհնար է դարձել նման գեղեցիկ ավանդույթները պահպանելու և շարունակելու համար:

Այս ծրագրի իրականացումը միաժամանակ կլուծի նաև Մեղրի համայնքի ամենամեծ խնդիրներից մեկը՝ երիտասարդության արտագաղթը, որն էլ իր հերթին կլուծի սահամանամերձ Մեղրի համայնքի անվտանգային և ռազմական բազում խորքային հարցեր:

Ծրագրի իրականացումը կխթանի նաև առողջ ապրելակերպի կազմակերպմանը: Երիտասարդների մոտ նկատվում է ֆիզիկական թերակտիվություն, ինչի հետևանքով առաջանում է մի շարք հիվանդություններ (ճարպակալում, հոգեբանական խնդիրներ, սրտի և ուռուցքաբանական հիվանդություններ և այլն) վնասակար սովորություններ, երբեմն էլ կործանարար վարք (ծխախոտի, ալկոհոլի թմրամիջոցների օգտագործում):

Մարզադաշտի վերակառուցումը մեծ աշխուժություն, հավատ ու հույս կներշնչի Մեղրի համայնքի բնակիչներին ապագայի հանդեպ:

Ծրագրի բարեհաջող ավարտից հետո նախատեսվում է մշակել տարածքի հատուկ պահպանման և սպասարկման ընթացակարգ և ռեժիմ, կսահմանվեն տեղական վճարներ, որոնք էլ կնպաստեն համայնքի բյուջեի տևական և շարունակական աճին:

Մեղրիի քաղաքային մարզադաշտի հետագա սպասարկումն ու պահպանումը կիրականացվի Մեղրիի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից:

Այս ծրագիրը միտված է 21-րդ դարի ստանդարտներին համապատասխան և Մեղրի համայնքի բնակիչներին արժանի նոր և հարմարավետ սարքավորումներով զինված և կահավորված մարզադաշտ և սպորտային համալիր ստեղծելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՉԱՔԱՐՅԱՆ